ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

գ. Փարաքար **14/08/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ: Փարաքար համայնքի արտահերթ ավագանու նիստը սկսվեց 12:00:

Բացակա էին՝ Օնիկ Ախվերդյանը, Ռուբիկ Աղեկյանը, Լիլիթ Ավագյանը, Վալոդյա Գրիգորյանը, Էմին Երիցյանը, Մարիամ Իսպիրյանը, Դավիթ Մինասյանը, Նեկտար Սարդարյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Փարաքարի համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնակատար Կարապետ Արթենյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Լյուդվիգ Գյուլնազարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Մանուկյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 14-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ավագանու
2024 թ. օգոստոսի 14-ի N 27-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Արաքսյա Սարգսյան)**
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Արաքսյա Սարգսյան)**
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Արաքսյա Սարգսյան)**
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ԹԻՎ 24-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Արաքսյա Սարգսյան)**
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ԹԻՎ 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Արաքսյա Սարգսյան)**
6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ ՍԱ և ԱՀ բաժնի պետ Լուսինե Սիմոնյան)**
7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ ՍԱ և ԱՀ բաժնի պետ Լուսինե Սիմոնյան)**
8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 114-Ա ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ ՖԳԵՀ և Հ բաժնի պետ Քնարիկ Մելքոնյան)**
9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի ԹԻՎ 13-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ ՖԳԵՀ և Հ բաժնի պետ Քնարիկ Մելքոնյան)**

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ ՖԳԵՀ և Հ բաժնի պետ Քնարիկ Մելքոնյան)**
11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՎ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ **(ներկայացնող՝ ՖԳԵՀ և Հ բաժնի պետ Քնարիկ Մելքոնյան)**
12. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՒՍԱԼԵՌ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0655 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ ՔՀԳ և Բ բաժնի պետ Հակոբ Միքաելյան)**
13. ԱՐՍԵՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ ՔՀԳ և Բ բաժնի պետ Հակոբ Միքաելյան)**
14. ԳԱԳԻԿ ՆԱՋԱՐԵԹԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ ՔՀԳ և Բ բաժնի պետ Հակոբ Միքաելյան)**
15. ՍՈՆԻԿ ՎԱՂԻՆԱԿԻ ԳՅՈՋԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ ՔՀԳ և Բ բաժնի պետ Հակոբ Միքաելյան)**
16. «ԳԻՆԵՎԱՆ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ ՔՀԳ և Բ բաժնի պետ Հակոբ Միքաելյան)**
17. ԴՐԱՍՏԱՄԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԼԱԼԱՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ ՔՀԳ և Բ բաժնի պետ Հակոբ Միքաելյան)**
18. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՐԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ **(ներկայացնող՝ համայնքի ղեկավար Լյուդվիգ Գյուլնազարյան)**
19. **ԿԱՐԱՊԵՏ ԱՐՇԱՎԻՐԻ ԱՐԹԵՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ(ներկայացնող՝ համայնքի ղեկավար Լյուդվիգ Գյուլնազարյան)**
20. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (ներկայացնող՝ համայնքի ղեկավարի խորհրդական Կարապետ Արթենյան)**
21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ **(ներկայացնող՝ համայնքի ղեկավար Լյուդվիգ Գյուլնազարյան)**

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ԱՐԱՔՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

«Ապերլու երկիր» խմբակցության ավագանու անդամներին հետաքրքրեց, թե արդյոք նոր պիտի կառուցեն մանկապարտեզը, Փարաքար համայնքի ղեկավար Լյուդվիգ Գյուլնազարյանը ավելացրեց, որ մանկապարտեզի շենքը պատրաստ է և հիմա հաստատում են այդ մանկապարտեզի կանոնադրությունը, որպեսզի արդեն շահագործեն և կազմակերպեն երեխաների ընդունելություն:

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի թիվ 515-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարաի 2022 թվականի փետրվարի 21-ի թիվ 09-Ն հրամանը և Արևաշատի վարչական ղեկավար Արփենիկ Վարդանյանի 2024 թվականի ապրիլի 17-ի թիվ 37 զեկուցագիրը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Արևաշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Արևաշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 1-ի:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Արևաշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված N 2-ի:
4. Սույն որոշումն ուժ մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ԱՐԱՔՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

«Ապերլու երկիր» խմբակցության ավագանու անդամներին հետաքրքրեց, թե այդ ի՞նչ կարգի մասին է խոսքը և մինչև՞ հիմա չկա սահմանված տեղական տուրքերի դրույքաչափերը: Ներկայացնողը հակիրճ ներկայացրեց կարգի մասին և ավելացրեց,

որ տեղական տուրքերը 2024 թվականի համար Փարաքար համայնքի ավագանին հաստատել է 2023 թվականի դեկտեմբեր ամսին:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.4-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 4.1-րդ, 4.2-րդ, 6-րդ, 8-12-րդ, 14-17-րդ, 20-րդ, 23-րդ, 24-րդ կետերի, հիմք ընդունելով ՀՀ Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի 2024 թվականի մարտի 5-ի թիվ 27 . 0 . 01/8631-2024 գրությամբ տրամադրված պետական փորձագիտական եզրակացությունը. ***<u>Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝</u>***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ԱՐԱՔՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով. ***<u>Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝</u>***

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերիի 15-ի «Համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց սեփականության իրավունքով օտարելու մասին» թիվ 76-Ա որոշումը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԹԻՎ 1658 ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Շանթ Նշան Խնկիկյանի 2023 թվականի օգոստոսի 28-ի թիվ 3621 դիմումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Շանթ Նշան Խնկիկյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, գյուղ Թաիրով, Կ.Դեմիրճյան թաղամաս 9-րդ փողոց 3/1 հասցեում

գտնվող 04-094-0529-0039 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,0175 հա մակերեսով հողամասը նվիրաբերությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին հանձնելուց հետո՝ որոշակի հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չէ օգտագործել համայնքի և Շանթ Նշան Խնկիկյանի միջև 2023 թվականի մարտի 2-ին կնքված /սեղանամատյանում գրանց. 1658/ անշարժ գույքի նվիրաբերության պայմանագրով սահմանված պայմաններին համապասխան. Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն լուծելու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի և քաղաքացի Շանթ Նշան Խնկիկյանի (ծնված 13.03.1979թ., անձնագիր՝ AU 0674433, տրված 2022 թվականի ապրիլի 7-ին, 011-ի կողմից) միջև 2023 թվականի մարտի 2-ին կնքված անշարժ գույքի նվիրաբերության /սեղանամատյանում գրանց. 1658/ պայմանագիրը:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:»:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ԹԻՎ 24-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՋԵԿ. ԱՐԱՔՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի, «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքի 8.1-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով ՀՀ Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի 2024 թվականի մարտի 5-ի թիվ 27.0. 01/8631-2024 գրությամբ տրամադրված պետական փորձագիտական եզրակացությունը. ***<u>Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝</u>***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարության ծառայությունների (այսուհետ՝ ՔՀԾԾ) իրականացման կամ

մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող ՔՀԾԾ իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին» թիվ 24-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ԹԻՎ 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՋԵԿ. ԱՐԱՔՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ավագանու անդամ հետաքրքրվեց, թե արդյոք հետագայում նորից որոշման մեջ փոփոխություն անելու կարիք չի լինի, քանի որ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն դարձել է «ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ, ներկայացնողը պարզաբանեց, որ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ–ի լիազորված անձ՝ «Ռեդինետ» ՓԲԸ-ի տնօրեն Անդրանիկ Քարամյանի 2024 թվականի ապրիլի 9-ի թիվ RN-049/24 գրությունը ներկայացվել է «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ–ի լիազորված անձ՝ /հիմք՝ լիազորագիր No MH/A0003/1.0/AA, տրված՝ 2024 թվականի հունվարի 12-ին/ «Ռեդինետ» ՓԲԸ-ի տնօրեն Անդրանիկ Քարամյանի 2024 թվականի ապրիլի 9-ի թիվ RN-049/24 գրությունը. ***<u>Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝</u>***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի «Վարձակալությամբ գույք տրամադրելու մասին» թիվ 42-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) որոշման 1-ին կետում «Ռեդինետ» բառը փոխարինել «ՄՏՍ Հայաստան» բառերով:
   2) որոշման 2-րդ կետում «մեկ տարի» բառերը փոխարինել «մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով:
2. Փարաքար համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթները, Հայաստանի Հանրապետության Արմավիրի

ապրիլի 30-ին կնքված հենասյուների օգտագործման իրավունքի տրամադրման N-37 պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն ոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՁԵԿ. ԼՈՒՍԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ/

«Ապերլու երկիր» խմբակցության ավագանու անդամները ցանկացան ավելի մանրամասն տեղեկանան այդ չափորոշիչների մասին: Ներկայացնողը պարզաբանեց և հավելեց, որ այդ չափորոշիչներով հնարավոր կլինի Փարաքար համայնքում երեք ամսից սկսած և ավել մշտական բնակվող, սակայն գրանցում չունեցող անապահով ընտանիքներին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անապահով բնակիչներին ևս դրամական աջակցություն հատկացնել: Չափորոշիչներով սահմանվում են Փարաքար համայնքում սոցիալական աջակցության ոլորտում համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին սոցիալական ծառայություններ մատուցելու կարգավորումները:

Ներկայացնողը հավելեց նաև, որ դրամական օգնություն տրամադրելու առավելագույն շեմը ութսուն հազար ՀՀ դրամն է:

Ավգանու անդամներին հետաքրքրեց, թե ինչպես կարող են համոզվել, որ երեք ամսից և ավել մշտական բնակվում են, ո՞վ է փաստում այդ տեղեկատվության ճշտությունը ներկայացնողը պատասխանեց, որ վարչական ղեկավարների կողմից տրվում է բնակիչների բնակության վայրի մասին տեղեկանք:

Ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով Փարաքար համայնքի մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի գծով հանձնաժողովի դրական եզրակացությունը***. Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Սահմանել Փարաքար համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ԼՈՒՍԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ/

Ավագանու անդամներին հետաքրքրեց, թե ինչպես է որոշվում դրամական օգնության չափը և ինչպես են որոշում որ ընտանիքներին տրամադրեն դրամական օգնություն: Ներկայացնողը պատասխանեց, որ համայնքապետարան դիմած յուրաքանչյուր բնակչի դիմումի հիման վրա կատարվում է տնայց, այնուհետև կատարվում է կարիքների գնահատում, ապա ուսումնասիրում է սոցիալական հանձնաժողովը և դրական եզրակացություն տրամադրելուց հետո որոշվում է, թե որ բնակչին որքան գումար պետք է տրամադրվի: Օգնությունը տարվա ընթացքում տրամդրվում է մեկ անգամ:

Ավագանու անդամ Ավետիս Ֆարֆարյանը հետաքրքրվեց, թե արդյոք Մուսալեռ գյուղից էլ կան դրամական օգնություն ստացող բնակիչներ, զեկուցողը նշեց, որ ցուցակում կա գրառում նաև բնակավայրերի վերաբերյալ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի N 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքարի համայնքապետարանի սոցիալական հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 2-ի թիվ 1 արձանագրությունը՝ ***<u>Փարաքար համայնքի ավագանին որոշում է.</u>***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով բնակիչներին տրամադրել 2 570 000 (երկու միլիոն հինգ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 114-Ա ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ՔՆԱՐԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ/

«Ապերլու երկիր» խմբակցության ավագանու անդամներին հետաքրքրեց, թե ինչ փոփոխություններ են կատարվում համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում՝ ավելանում է պաշտոններ, թե կրճատվում: Նիստը վարողը պատասխանեց, որ և՛ կրճատում են, և՛ ավելացնում, կրճատել են հսկիչ տեսուչի հաստիքը և ավելացրել են համայնքի ղեկավարի օգնականի հաստիքը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ

օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի՝ 2024 թվականի մայիսի 6-ի № ԳՍ/15.4/14554-2024 գրությունը՝ Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 114-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի ԹԻՎ 13-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ՔՆԱՐԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ/

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2024թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու Փետրվարի 26-ի թիվ 6-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 13-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«2) Համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդի 7838.0 հազ. դրամ գումարը ուղղել նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված պարտավորությունների կատարմանը՝ բաժին 01 Խումբ 01 Դաս 1- «Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում» ծախսերի նախահաշվի 4214-Կապի ծառայություններ հոդվածին 64.0 հազ դրամ, 4232-Համակարգչային ծառայություններ հոդվածին 110.0 հազ. դրամ, բաժին 05 Խումբ 02 Դաս 1- « Կեղտաջրերի հեռացում» ծախսերի նախահաշվի 4213-Կոմունալ ծառայություններ հոդվածին 764.0 հազ. դրամ և բաժին 08 Խումբ 02 Դաս 4- «Այլ մշակութային

կազմակերպություններ» ծախսերի նախահաշվի 4239- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածին 6900.0 հազ. դրամ, իսկ 178865.951 հազ դրամ 10 լումա գումարն ուղղել բյուջեի ֆոնդային մաս:

2) Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ

«3) «Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից» 20000.0 հազ դրամ գումարը ուղղել Բաժին 09 Խումբ 05 Դաս 1 ՝ «Արտադպրոցական դաստիարակություն» ծախսերի նախահաշվի 4511 հոդվածին՝ սահմանելով 86988.7 հազ. դրամ , 5000.0 հազ. դրամ գումարը ուղղել Բաժին 01 Խումբ 01 Դաս 1 «Օրենսդիր և գործադիր մարմիններ , պետական կառավարում» ծախսերի նախահաշվի 4233- «Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ» հոդվածին »:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՋԵԿ. ՔՆԱՐԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-րդ հոդվածի պահանջներով և և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2024 թվականի մայիսի 24-ի թիվ 01/6.2/03902-2024 գրությունը.Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի ամայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝

   1) Վարչական և ֆոնդային մասերի եկամուտներ, ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն N1 հավելվածի.
   2) Պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն N 2 հավելվածի.
   3) Վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումներն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի և տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ համաձայն N3 հավելվածի.
   4) Եկամուտները և ծախսային քաղաքականությունը շարադրող մասեր՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՎ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ՔՆԱՐԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Արմավիր մարզի Փարաքար համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի և կիսամյակի կատարման մասին հաղորդումը ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՒՍԱԼԵՌ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0655 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ/

Ավագանու անդամ Ավետիս Ֆարֆարյանը ցանկացավ, որ ներկայացնողը ավելի մանրամասն ներկայացնի այս հարցը: Հակոբ Միքաելյանը հստակեցրեց հողամասի գտնվելու վայրը և թե ինչ նպատկով է օգտագործվելու հողամասը՝ նպատակային նշանակությունը փոփոխելուց հետո:

Ավագանու անդամ Արաքսյա Վարդանյանը առաջարկեց այս հարցը օրակարգից հանել, իսկ նիստն արձանագրողը պարզաբանեց, որ հնարավոր չի լինի հանել օրակարգից, քանի որ օրակարգը արդեն իսկ հաստատվել է և չեն կարող

փոփոխություն կատարել: Համայնքի ղեկավար Լյուդվիգ Գյուլնազարյանը առաջարկեց, որոշումը չընդունել հետագայում քննարկելու և հստակեցնելու համար:

Գևորգ Խաչատրյանը առաջարկեց, որպեսզի հողամասերի նպատակային նշանակության փոփոխության հարցերը օրակարգից հանվեն. որպեսզի Փարաքար համայնքի բնակիչների մոտ հարց չառաջանա ինչու իրենց հողամասերի հարցերը չեն լուծվում, այլ մյուսներինն է օրակարգում: Լյուդվիգ Գյուլնազարյանը ավելացրեց, որ բնակիչների դիմումները շատ են և հնարավոր չէ մեկ նիստով բոլորի հարցերը դնել օրակարգում: Գևորգ Խաչատրյանի բարցրացրած առաջարկի շուրջ քննարկում իրականացրեցին և Արաքսյա Վարդանյանը ավելացրեց, որ հնարավոր չէ այդ հարցերը հանել օրակարգից:

Ավագանու անդամները «Համայնքային սեփականություն հանդիսացող Մուսալեռ գյուղում գտնվող 0.0655 հա հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» հարցին դեմ քվեարկեցին հետագայում քննարկում իրականացնելու, այնուհետև տարածքը ուսումնասիրելու և հետո նոր ավագանու օրակարգում դնելու և որոշում ընդունելու ակնկալիքով:

Փարաքար համայնքի ավագանիները այս որոշման նախագծին քվեարկեցին դեմ և այս հարցի վերաբերյալ որոշում չընդունվեց:

Լսեցին

ԱՐՍԵՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ՋԵԿ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ/

Հարցը լսելուց հետո՝ Արաքսյա Վարդանյանը առաջարկեց հայտարարել 10 րոպե ընդմիջում, նիստին ներկա 13 ավագանու անդամները կողմ քվեարկեցին Արաքսյա Վարդանյանի առաջարկին,որից հետո նիստը շարունակեցին և ավագանու անդամները քվեարկություն կատարեցին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված 2024 թվականի հունիսի 3-ի ճարտարապետահատակագծային առաջադրանքը և քաղաքացի Արսեն Ֆելիքսի Մելիքսեթյանի 2024 ապրիլի 3-ի N 2012 դիմումը. ***<u>Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝</u>***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Այգեկ գյուղում գտնվող՝ Արսեն Ֆելիքսի Մելիքսեթյանին սեփականության իրավունքով պատկանող, 04-009-0149-0012 կադաստրային ծածկագրով 0,3 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /հողատեսքը՝ վարելահող/ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել՝ որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների :
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-2 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39-Ա/

Լսեցին

ԳԱԳԻԿ ՆԱԶԱՐԵԹԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի կողմից 2024 թվականի ապրիլի 16-ին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը և քաղաքացի Գագիկ Նազարեթի Հակոբյանի 2024 թվականի ապրիլի 11-ի N 2213 դիմումը.***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղում գտնվող՝ Գագիկ Նազարեթի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող, 04-082-0311-0010 կադաստրային ծածկագրով 0,27 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /հողատեսքը՝ վարելահող/ հողամասի նշանակությունը փոփոխել՝ որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու համար:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40-Ա/

Լսեցին

ՍՈՆԻԿ ՎԱՂԻՆԱԿԻ ԳՅՈՋԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի կողմից 2024 թվականի ապրիլի 1-ին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը և քաղաքացի Սոնիկ Վաղինակի Գյոզալյանի 2024 թվականի մարտի 19-ի N 1680 դիմումը.***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Այգեկ գյուղում գտնվող՝ Սոնիկ Վաղինակի Գյոզալյանին սեփականության իրավունքով պատկանող, 04-009-0175-0008 կադաստրային ծածկագրով 0,7 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /հողատեսքը՝ վարելահող/ հողամասի նշանակությունը փոփոխել՝ որպես արդյունաբերության,

ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ հետագայում ջերմոցներ և տնտեսական շինություն կառուցելու համար:

2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41-Ա/

Լսեցին
«ԳԻՆԵՎԱՆ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ/

Ավագանու անդամները որոշեցին հարցի քննարկումը թողնել հետոյին, քվեարկեցին որոշման նախագծին դեմ և այս հարցի վերաբերյալ որոշում չընդունվեց:

Լսեցին
ԴՐԱՍՏԱՄԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԼԱԼԱՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ/

Հակոբ Միքաելյանը հստակեցրեց հողամասի գտնվելու վայրը և ավելացրեց, թե ինչ նպատակով է օգտագործվելու հողամասը՝ նպատակային նշանակությունը փոփոխելուց հետո:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2024 թվականի օգոստոսի 9-ի ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը և քաղաքացի Դրաստամատ Հարությունի Լալայանի 2024 թվականի հունիսի 18-ի N 3625 դիմումը. ***<u>Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝</u>***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող՝ Դրաստամատ Հարությունի Լալայանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0313-0136 կադաստրային ծածկագրով, 0,1351 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /հողատեսքը՝ վարելահող, 0.0764՝ խաղող/ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել՝ որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ հետագայում գյուղատնտեսական մթերքի վերամշակման կետ կառուցելու համար:

2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարելու սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42-Ա/

Լսեցին
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՐԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Փարաքար գյուղի Սուրբ Հարություն եկեղեցու Հոգևոր հովիվ ավագ քահանա Տեր Գեղամ Քեսաբլյանի 2024 թվականի փետրվարի 13-ի թիվ 875 դիմումը ՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն Փարաքար գյուղի Սուրբ Հարություն եկեղեցուն, ջեռուցման ամիսներին եկեղեցու բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով, գազի վարձավճարի վճարման համար հատկացնելու 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ա/

Լսեցին
ԿԱՐԱՊԵՏ ԱՐՇԱՎԻՐԻ ԱՐԹԵՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Կարապետ Արշավիրի Արթենյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ /ԶԵԿ. ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԵՆՅԱՆ/

Կարապետ Արթենյանը ներկայացրեց, որ Փարաքար համայնքում 2024 թվականի երկրորդ եռամսյակում իրականացվել է իրավական հսկողություն և դրա ավարտից հետո իրավական հսկողություն իրականացնող մարմինը ներկայացնում է ակտը՝ թերությունների և բացթողումների վերաբերյալ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 8-ի N 01/13/05814-2024 գրությունը՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում 2024 թվականի երկրորդ եռամսյակում իրականացված իրավական հսկողության արդյունքներն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել Փարաքար համայնքի ղեկավար Լյուդվիգ Գյուլնազարյանին սեղմ ժամկետում իրավական ակտով արձանագրված թերությունները վերացնել:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ /ԶԵԿ. ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով. ***Փարաքարի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2024 թվականի հաջորդ հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

Ավագանու անդամներ

ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆ

ԼԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԵՍԱՅԱՆ

ՌՈՒԴԻԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ

ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԿԱԶ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ՖԱՐՖԱՐՅԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Գայանե Մանուկյանը _____